ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"4 " դեկտեմբերի 2012թ № 172 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՍԻՍԻԱՆ-ՏՈԼՈՐՍ-ԲՆՈՒՆԻՍ-ԱԽԼԱԹՅԱՆ» ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հոկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման մասին» N 1273-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետի, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Հաստատել Սյունիքի մարզի «Սիսիան - Տոլորս - Բնունիս - Ախլաթյան» ներմարզային երթուղում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մարզային մրցութային հանձնաժողովի կողմից 2012 թվականի նոյեմբերի 26-ին անցկացված մրցույթի արդյունքների վերաբերյալ արձանագրությունները՝ համաձայն հավելվածի:

2.Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունների երթուղիների սպասարկման ժամկետ սահմանել երեք տարի:

3.Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. դեկտեմբեր 4
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. N 172 Ա որոշման

Ա ր ձ ա ն ա գ ր ո ւ թ յ ո ւ ն
ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով անցկացված մրցույթի արդյունքները ամփոփելու մասին

ք. Կապան

2012թ. նոյեմբերի 26 ժ 15-00

ՀՀ Սյունիքի մարզպետի 2010թ. ապրիլի 28-ի N 31 որոշմամբ հաստատված մրցութային հանձնաժողովի կազմը՝ նախագահ՝ Ա.Դոլունց - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, Ա. Ուստաբաշյան – քաղաքաշինության վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ, քարտուղար՝ Ս. Աղաբեկյան - քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ, Ս.Ավետիսյան - ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ, Ս. Արզումանյան - ՀՀ տրանսպորտային տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ, Ա.Շաղոյան- ՀՀ ճանապարհային ոստիկանության ներկայացուցիչ, 2-րդ գումարտակի 6-րդ վաշտի, 2-րդ դասակի հրամանատար:

Քննարկեցին 2012 թ. նոյեմբերի 26-ին կայացած «Սիսիան - Տոլորս - Բնունիս - Ախլաթյան» երթուղում մրցույթի արդյունքները:

«Սիսիան - Տոլորս - Բնունիս - Ախլաթյան» ներմարզային երթուղում հայտ էր ներկայացրել անհատ ձեռնակատերը Արամ Վարդանյանը (գտնվելու վայրը՝ ք.Սիսիան, Կոմիտասի փ., տ.6):

Մրցութային հանձնաժողովը «Սիսիան - Տոլորս - Բնունիս - Ախլաթյան» ներմարզային երթուղու մրցույթի արդյունքում կայացրած քվեարկությամբ (կողմ-6, դեմ 0, ձեռնպահ-0) հաղթող ճանաչեց անհատ ձեռնակատեր՝ Արամ Վարդանյանին:

Արձանագրության արդյունքները երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետին համապատասխան իրավական ակտ ընդունելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Դոլունց

անդամներ

Ա.Ուստաբաշյան

Ս.Աղաբեկյան

Ս.Ավետիսյան

Ս.Արզումանյան

Ա. Շաղոյան

Արձանագրություն N 4

ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի

ք.Կապան 2012 թ. նոյեմբերի 27-ի նիստի

Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ՝ Ա. Դոլունց, քարտուղար՝ Ս. Աղաբեկյան

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի թվով 6 անդամներ՝ Ա.Դոլունցը, Ա.Ուստաբաշյանը,Ս.Աղաբեկյանը,Ս.Ավետիսյանը,Ս.Արզումանյանը ,Ա Շաղոյանը

Օրակարգում – ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2012 թվականի նոյեմբերի 26-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

Լսեցին – ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակոն 2012 թվականի նոյեմբերի 26-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:
/ Զեկ. Ս. Աղաբեկյան/

Ուսումնասիրելով կայացած մրցույթի ընթացքում մասնակիցների ներկայացրած հայտերը և գնահատելով մրցույթին ներկայացված տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակները մրցութային հանձնաժողովը **որոշում է.**

1.Հաղթող ճանաչել անհատ ձեռնակատեր՝ Արամ Վարդանյանին ներմարզային «Սիսիան - Տոլորս - Բնունիս - Ախլաթյան» երթուղում.
ավտոմեքենայի մակնիշը՝ «ՖՈՐԴ», պետհամարանիշը՝ 33 UP 980

2.1 Անհատ ձեռնակատեր Մերի Ազարումյանին՝ ապահովել «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութի անցկացման» կարգով սահմանված ժամկետում «Սիսիան-Անգեղակոթ- Շաղաթ-Բարձրավան» երթուղու սպասարկման համար ներկայացրած փաթեթի փաստաթղթերում թերությունների վերացումը և սահմանված կարգով պահանջվող փաստաթղթերի ամբողջական ներկայացումը:

2.2 Հանձնաժողովին՝ հարցին անդրադառնալ սահմանված ժամկետում 2.1 կետի պահանջների կատարումը անհատ ձեռնակատեր Մերի Ազարումյանի կողմից ապահովելուց հետո:

Սույն որոշումը ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետի հաստատմանը:

(Քվեարկության արդյունքները՝ կողմ՝6, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա):

Հանձնաժողովի նախագահ Ա.Դոլունց

անդամներ Ա.Ուստաբաշյան

Ս. Աղաբեկյան

Ա.Ավետիսյան

Ս. Արզումանյան

Ա. Շաղոյան